

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿՆՈՉ ԵՎ ՄՈՐ ԽԲԱՎԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՆ ԵՎ ՄԻԶՆԱԴՐՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԶԱՐԴԱՅՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ

Ամեն մի ժողովրդի պատմական անցյալի տարրեր շրջաններում ամուսնոթյան ձևերը և կնոջ, հատկապես մոր, իրավական դրությունը կապված է եղել տվյալ երկրում տիրող հասարակարգի, սոցիալ-տնտեսական պայմանների, ապա և արտադրողական ուժերի զարգացման հետ։ Միննույն ժամանակ կնոջ իրավական դրության հետ սերտ առնչություն է ունեցել այդ ժողովրդի մանկաբարձական գիտելիքների զարգացման ընթացքը։ Դրա փայլուն օրինակն է մեր դարը ու մեր երկիրը, որտեղ սոցիալիստական իրավակարգում ապրող կնոջ և տղամարդու իրավահավասարության շնորհիվ ծննդոգնության գործը դրված է այնպիսի բարձր ու կայուն հիմքերի վրա, որի մասին չեն կարող անգամ երազել արդի կապիտալիստական ռառաջադեմ երկրները։

Միջնադարյան բժշկության պատմությունը տալիս է մեզ այդ դրությունն ապացուցող մի այլ ցայտուն օրինակ։ Ինչպես հայտնի է, արաբական բժշկականության ծաղկման շրջանում մանկաբարձական գիտելիքներն արաբների և մյուս մահմեդական ժողովուրդների մոտ կանգնած են եղել բավականաշափ ցածր մակարդակի վրա։ Մինչդեռ նույն ժամանակաշրջանի Հայաստանում այդ գիտելիքները դրված են եղել ավելի բարձր հիմքերի վրա։ Պատմական այդ երեսութիւնների մասին պատճառներից մեկն այն է, որ կինը արաբների և մահմեդական մյուս ժողովուրդների մոտ հասարակական իրավունքներից զուրկ է եղել և ցարդ էլ մեր մեծ Միության սահմաններից դուրս մահմեդական արևելքում քարոշ է տալիս իր կիսաճորտային դրությունը, մինչդեռ պատմական Հա-

յաստանում կնոջ իրավական դրությունն անհամեմատ ավելի բարձը է եղել:

Մեր տեղեկությունները հնագույն շրջանի հայ կնոջ իրավական դրության մասին աղքատ են: Այդ մասին որոշ վկայություններ կարելի է քաղել մասամբ հին հայ սովորութական իրավունքից, մասամբ ժողովրդական բանահյուսությունից և, վերջապես, պեղումների միջոցով հայտնաբերված պատմական հուշարձանների վերծանությունից: Այդ աղբյուրների մեջ եղած տվյալները հնարավորություն են ընձեռում մեզ նշելու ընդհանուր մարդկայինը, որ համատարած է քաղմաթիվ ժողովրդների մեջ, և ընդգծելու այն ուրույնը, մասնավորը, որ հատուկ և բնորոշ է հայերի համար:

Հնում շատ ժողովուրդների մոտ նրանց հասկացողությունները բեղմանավորման, ծննդաբերության և պտղաբերության մասին արտահայտություն են գոտել կրոնի և հավատալիքների մեջ: Նրանց աստվածների պանթեոնում կենտրոնական և ամենապատվավոր տեղն է գրավել ռմեծ մայր»՝ «ժողովրդի մայր» կամ «աստվածամայր» դիցուհին: Այդ դիցուհին հին կերպարների մեջ պատկերագրված էր որպես մի երիտասարդ, առողջ և գեղեցիկ կին-մայր՝ ծծկեր մանուկը գրկած: Այսպես, օրինակ, սումերները պատկերացրել են հշտարին, եգիպտացիները՝ Իզիդային (Իզիսին) և քրիստոնյաները՝ Մարիամ աստվածածնին: Հայերի մոտ այդպիսի դիցուհի է եղել Անահիտը, որին մեր նախնիները, Ագաթանգեղոսի վկայությամբ, «ոսկեհատ», «ոսկեծին» և «ոսկեմայր» են անվանել:

Հին ժողովուրդների պաշտամունքի մեջ, արդեն պատմական շրջանում, այդ դիցուհիները պատկերացվել են իրրև բերքատվության, պտղաբերության, մարդաշատության և առատության սիմվոլ, սակայն կասկածից դուրս է, որ նախնական շրջանում այդ դիցուհիների պաշտամունքն ավելի նեղ և կոնկրետ իմաստ է ունեցել, այն է՝ մոր և մանկան պաշտամունքը: Հավանորեն մոր պաշտամունքն սկիզբ է առել այն հնագույն շրջանում, երբ նախնական համայնքի մեջ գերիշխել է մոր իրավունքը:

Ազգակցության-արյունակցության կապն այդ շրջանում մայրն է եղել: Նա է կազմել մայրական սերունդը մայրական իրավունքի համեմատ: Տղամարդու և կնոջ ամուսնական կապերը նախնական այդ շրջանում կարճատես ու պատահական բնույթ են կրել: Այդ պատճառով էլ մանկան միակ ծնողը մայրն է համարվել:

Մոր իրավական դրությանը մեծապես նպաստել է նաև նրա տնտեսական համեմատաբար բարեկեցիկ դրությունը: Կինն առաջինն է եղել, որ նախնական հասարակության մեջ սկսել է զբաղվել Հողագործությամբ, մի հանգամանք, որ ապահովում էր նրա տնտեսական անկախությունը տղամարդուց: Այստեղից արդեն հասկանալի է դառնում այն բարձր դիրքը, որ գրավել է կինը նախնական հասարակության և ընտանիքի մեջ:

«Եանանց այս դերը ընտանիքի մեջ ապահովեց նրանց այնպիսի բարձր հասարակական մի դիրքը, — գրում է Ֆ. Էնգելսը, — որը հետագայում նրանք այլևս երբեք չեն գրավելու:

Այս շրջանին է, հավանորեն, պատկանում հնագույն կերպարվեստի այն հուշարձանը, որը գտնվում է այժմ Երևանի Պատմական թանգարանում և որը, մասնագետների կարծիքով, գալիս է նեղութիւն շրջանից (Կ. Ղաֆաղարյան): Այդ հազվագյուտ հուշարձանը մի սալ բար է, որի վրա բավականաշափ պարզ և պրիմիտիվ ձևով նախնական մարդը քանդակել է մոր և մանկան կերպարը:

Վերոհիշյալ հուշարձանը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ, ինչպես սումերները պաշտել են Իշտարին՝ աստվածային մանուկը գրկած, և հին եգիպտացիներն Իդիուային՝ Հորուահին գիրին առած, այնպիս էլ հին հայերի մոտ աստվածային մոր ու մանկան կերպարը նույնպես պաշտամունքի առարկա է եղել: Այս հավանական ենթադրությունն աներկրա է դարձնում նաև համարյա նույն բովանդակությամբ մի այլ հուշարձան, որը նույնպես հայտնաբերվել է պեղումների ժամանակ Հայաստանի սահմաններում: Սա վարպետորեն ձուլված ուկի մի մեդալիոն է, որի վրա քանդակած է մի կին բարուրած մանուկը ձեռին: Այս հուշարձանը գտնված է նոր Բայազետի շրջանի մի դամբարանում և պատկանում է առաջին դարին մեր թվ. առաջ (Երևանի Պատմական թանգարան, էքսպոնատ № 1638):

Եթե այս հուշարձաններն արտահայտել են բերքատվության և առատության գաղափարը՝ կաղված աստվածային մոր և մանկան պաշտամունքի հետ, և պահապարբեկան է իմանալ, թե ինչպես են արտացոլվել հին հայերի իրական կյանքում մոր և մանկան կապերը և ինչպիսի մոտեցում է ունեցել ժողովուրդը դեպի մայրն ու մանուկը, Այդ մասին թեպետև ոչ հարուստ, սակայն բավականաշափ պերճախոս վկայություններ են ընձեռում մեզ հին դամբարանների պեղումները, որ տարիներ շարունակ կատարել են

Ե. Հալայանը և Կ. Ղաֆաղարյանը Հայաստանի տարբեր վայրերում:

Հնագետ-ազգագրագետ Ե. Հալայանը Սևանի ավագանում դամբարանների պեղումների ժամանակ 11 դեպքում դամբարանների մեջ հայտնաբերել է կոնց և ծծկեր մանկան կմախճներ (Ազգագրական հանդես, XV, 1907 թ.), նման մի գերեզման, որի մեջ կինը թաղված է եղել երեխայի հետ միասին, հայտնաբերել է Կ. Ղաֆաղարյանը պեղումների ժամանակ կիրովականի շրջանում:<sup>1</sup>

Կենդանի երեխային մահացած մոր հետ միատեղ թաղելու սովորությունը հայտնի էր նախնադարյան մի շարք ժողովուրդների: Այդ սովորությունը նախնադարյան մարդու ծանր կենցաղի արդյունքն էր: Ծծկեր կամ փոքր մանուկը մոր մահվանից հետո երկար չէր կարող ապրել: Նրա մահն անխուսափելի է եղել, ուստի ժողովուրդը գերազանց է կենդանի և առողջ երեխան թաղել մահացած մոր հետ: Այս սովորությունը պարզ ցույց է տալիս, որ մանկան միակ պահապանն ու դաստիարակը մայրն է համարվել:

Հնագույն շրջանի ընտանիքի այդ տրադիցիաների մի մասը հայ ժողովուրդը պահել է թե՛ իր հիշողության և թե՛ իր կենցաղի մեջ և արտացոլել է այդ իր բանահյուսության, հատկապես «Սանա Մոեր» ժողովրդական-դյուցազնական վեպի մեջ:

Մեր ժողովրդական վեպի համեմատ՝ Սանա տան հիմնադիրը մի կին է — Սովինարը, որի սրբիները՝ Սանասարն ու Բաղդասարը հայր շեն տեսել և հայր էլ շեն ճանաշում: Նրանց միակ ծնողը, սնողն ու դաստիարակը մայրն է՝ Սովինարը:

Վեպի հերոսուհիներն ինքնուրույն են՝ իրենց մատածողության ու գործողության մեջ: Նրանք են տնօրինում իրենց բախտը: Նրանք են ամուսին ընտրում և համապատասխան առաջարկություն անում և ոչ թե տղամարդը, ինչպես այդ տեղի է ունենում հայրիշխանության դարաշրջանում: Ամուսնական կապերն էլ, հարկավ, հաճախ պատահական և կարճատև են եղել: Օրինակները շատ են: Թերենք մի երկուար:

Պղնձե քաղաքի թագավորի աղջիկն ինքն է ընտրում ամուսնության համար Բաղդասարին, ինքն էլ առաջարկություն անում, ապա ամուսնանում նրա հետ:

<sup>1</sup> Կ. Ղաֆաղարյան՝ Դամբարանների պեղումները կիրովականում, ՍՍՌՄ Գլուխ Ակադեմիայի հայկական Փիլիպի Տեղեկագիր, № 3-4, 1941 թ.

Խսմիլ խանումը (Մսրա թագավորի այրին) հրավիրում է իր մոտ Զոշ (Մեծ) Մհերին՝ ցանկանալով նրանից երեխա ունենալ, և Զոշ Մհերը կատարում է նրա ցանկությունը: Ապա փոքրիկ գըճ-տությունից հետո, երբ պարզվում է ժամանակավոր ամուսինների հասկացողությունների տարբերությունը, Մհերն սպառնում է կնոջը, թե կիողնի նրան ու կհեռանա, Կինն անտարբեր պատասխանում է:

«Դու քեզն ը, կուզիս մկա էլ զնա՛,  
Իս կ'ուզեր՝ էսա լաճն քենե իլնը՛.  
Էսա լաճ ա'իլնը՛, Մսըր զավթը՛...  
Կ'ուզիս, մկա նստը՛, կ'ուզիս, զնա՛»:<sup>1</sup>

Նույնիսկ ժամանակավոր հարակցության-«ամուսնության» կետ նպատակն է՝ «լաճ»—ժառանգ ունենալը:

Խանգութին ինքն է հրավիրում իր մոտ Դավթին, ամուսնության առաջարկություն անում, ապա և ամուսնանում նրա հետ: Նույնն է անում Բաննա խանումը և Դավթից մի երեխա է ունենում, և այն:

Կնոշ և տղամարդու նույնպիսի հարաբերություն դիտում ենք նաև Մովսես Խորենացու վերաբրուկային կարգով ավանդված Եամիրամի ու Արայի առասպելի մեջ («Հայոց պատմություն», գլ. 1-ին, ԺԵ):

Բերված օրինակներից պարզ երևում է, որ ժողովուրդն իր բանահյուսության մեջ արտացոլել է այն շրջանի տրադիցիաներն ու ընտանեկան հարաբերությունները, որոնք հատուկ են մատրիարխատիքին, երբ կինը գրավում էր հասարակական բարձր դիրք, իսկ համայնքում տիրում էր մայրական իրավունքը:

Մանկաբարձական գիտելիքներն այս ժամանակաշրջանում, հավանորեն, կրում էին էմպիրիկ բնույթ, աղատ լինելով մոգական բժշկականության յուրահատուկ սնապաշտություններից և հավատալիքներից:

Ավելի ուշ՝ դասակարգային հասարակության մեջ, երբ ամրանում են ամուսնական կապերը, կինն իր գերիշխող դերը համայն-

<sup>1</sup> «Սասնա ծռելք»—Խմբ. Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի, Է. Երևան, 1936 թ., էջ 493:

<sup>2</sup> «Սասնա ծռելք», I հ., էջ 142, այլուր:

քի շրջանում զիջում է տղամարդ-ամուսնուն: Վերջինս այժմ արդեն համարվում է տան տերն ու տնօրենը: Այնուամենայնիվ, չնացած դրան, մինչև վերջին ժամանակներն անգամ, երբ դեռ գոյություն ունենալու նահապետական հայ ընտանիքը, այդպիսի ընտանիքում մայրն էր համարվել տան օջախին հիմքն ու կենդանի ոգին: Ոչ հեռու անցյալում, երբ հայ գյուղացու տանը մեռնում էր կինը, ասում էին՝ «այս տան օջախը հանգավա կամ տայս տան կրակը մարեց», իսկ եթե մեռնում էր ամուսինը, ասում էին՝ «այս տունը այլևս տեր չունի կամ պաշտպան չունի»:

Կասկածից վեր է, որ հին հայ գերդաստանում տիրող մոտեցումը գեպի կինն ու հատկապես մայրը հիմնված է եղել ժողովրդի հին տրադիցիաների և սովորույթների վրա:

Այդպիսի հնագույն տրադիցիաներ պահպանվել են նաև միշտոք այլ ժողովուրդների, ինչպես, օրինակ՝ Իրանում և Հնդկաստանում ներկայումս ապրող պարսիկ զրադաշտականների կամ գերերի մոտ: Հիմք կա ենթադրելու, որ նախաքրիստոնեական շրջանում հեթանոս հայերի և պարսիկ զրադաշտականների ընտանեկան և ամուսնական կյանքի, զրազմունքի, կրոնի ու կենցաղի մեջ շատ ընդհանուր կամ նման գծեր են եղել: Դրանով պետք է բացատրել հայերի և այժմյան զրադաշտականների գերերի կենցաղային մանկաբարձության մեջ եղած միջամտությունները և դրանց հետ կապված ծեսերի ու հավատալիքների մեծ նմանությունը, գրեթե նույնությունը: Այս տեսագծով մեզ համար որոշ հնտաքրիստություն են ներկայացնում գերբ ամուսինների փոխադարձ հարաբերությունները և գերբ կնոջ գերն ընտանիքի և հասրակության մեջ:

Գերերեն իրենց կենցաղով և սովորություններով ոչնչով չեն նմանվում պարսիկ մահմեդականներին և սրբությամբ հետևում են իրենց հին կրոնին, հին ընտանեկան ու ամուսնական տրադիցիաներին: Ընտանեկան կյանքում գերբի կինն իր ամուսնու իրավահավասար և ամենամոտիկ ընկերն է համարվում: Նրանք պարսիկ մահմեդականների կանանց նման երեսները գողով չեն ծածկում և ամեն տեղ ազատ ել ու մուտք ունեն տղամարդու հետ հավասար:

Երիտասարդ գերերեն ամուսնանալիս հանդիսավոր կերպով երդում են՝ հավատարիմ մնալ իրար թե՛ ներկա և թե՛ հանդեր-

ձաւ կլանքում: Երբ կինը մեռնում է, գերբը հազվագյուտ դեպքումն է երկրորդ անգամ կին առնում:<sup>1</sup>

Կնոշ իրավական դրության մասին հայ հին գրականության մեջ պահպանված նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում քրիստոնեությունն ընդունելու նախօրյակին ընտանիք մեջ հայ կինը գրավել է բավականին բարձր դիրք:

Քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելուց հետո՝ եկեղեցին ինչպես Հայաստանում, այնպես էլ մյուս երկրներում, ձևդտում էր իր անմիջական ազգեցության և հսկողության տակ առնել ամուսնության վերաբերող բոլոր հարցերը: Նա աշխատում է, նախ և առաջ, վերացնել ամուսնական կյանքում տիրող հեթանոսական այն սովորույթները, որոնք խախտում էին միակնության սկզբունքները կամ ընդունելի չէին քրիստոնեական ուսմունքի տեսակետից: Վերջապես, ֆեոդալական հասարակարգը, որը Հայաստանում քրիստոնեությունն ընդունելու ժամանակ արդեն տիրող էր հանդիսանում, իբրև տնտեսական-հասարակական մի նոր ձև, նոր հարաբերություններ պետք է ստեղծեր թե՛ հասարակության և թե՛ ընտանիքի մեջ: Սակայն ընտանիքի և ամուսնական հարաբերությունների մեջ եկեղեցու առաջադրած խնդիրներն այնքան էլ հեշտ լուծելու հարցեր չեն, որովհետև ժողովուրդը հեշտությամբ չէր հրաժարվում դարերի ընթացքում ստեղծված իր աշխարհայեցողությունից և կենցաղի մեջ արմատացած սովորույթներից: Այդ պատճառով հայ եկեղեցին ամուսինների իրավական հարաբերությունները և ամուսնության խնդիրները լուծելիս՝ ստիպված եղավ հիմք ընդունել հին հայ սովորութական իրավունքը:

Նախկինում՝ ըստ ժողովրդի հասկացողության՝ ամուսնությունը մի ակտ էր, որի հիմնական նպատակն էր ցեղի ու սերնդի աճն ու շարունակությունը: Դա մի հասկացողություն էր, որը հատուկ էր նաև մի շարք այլ ժողովուրդների, օրինակ՝ հին հուներին, հնդկացիներին և որիշներին: Եկեղեցին՝ ընդունելով ժողովրդի այդ հասկացողությունն ամուսնության վերաբերյալ, փորձեց ամուսնությունը վերածել կրոնա-ավանդական մի ակտի, ինչպես այդ արեց կաթոլիկ եկեղեցին՝ ամուսնության ակտն անլուծելի համարելով: Սակայն Շահապիվանի եկեղեցական ժողովում (447 թ.), որտեղ ընդունվել էին մի շարք որոշումներ ամուսնության և ամուսիններներին:

<sup>1</sup> Լ. Բաբայան - «Պարսկական գրադաշտականները», «Աղքագրական հանգես», 1902 թ., էջ 43—45:

ոի իրավական հարաբերությունների վերաբերյալ, կրոնա-եկեղե-ցական ըմբռնողությունը նահանջեց աշխարհիկ-ազգային ըմբռու-նողության առաջ՝<sup>1</sup> Այդ է պատճառը, որ ամուսնությունը հայերի մեջ՝ հակառակ եկեղեցու ձգումներին՝ պահպանել է աշխարհիկ կամ քաղաքացիական ամուսնության շատ զորեղ գծեր։ Այդ հան-գումանքն իր զորեղ արտահայտությունն է գտնել այն բանում, որ ժողովն ընդունեց ամուսնության լուծելիության սկզբունքը։ Ժողո-վի որոշմամբ՝ թույլատրվում էր լուծել անպտուղ ամուսնությու-նը։ Գրանովի իսկ եկեղեցին մտադիր էր վերացնել ժողովրդի մեջ կենցաղավարող մի սովորություն, որը խախտում էր մոնոգամիա-յի սկզբունքը։ Ըստ այդ սովորության՝ եթե կինը ամուկ էր լինում, ամուսինը երկրորդ կին էր առնում։ Առաջին կինը այդպիսի դեպ-քում պահպանում էր տանտիկնոշ բոլոր իրավումքները։ Նման սո-վորություն գոյություն է ունեցել նաև հին հույների, հնդկացիների և հռովմեացիների մեջ։ Հայաստանի որոշ շրջաններում այդ սո-վորությունը պահպանվել էր մինչև 20-րդ դարի սկիզբը։ Դա-պահպանվել է նաև արդի գերերի մեջ։

Հայերի հասարակական-տնտեսական կյանքում հնում գոյու-թյուն է ունեցել նաև մի այլ սովորություն, եթե անպտուղ ամուս-նության պատճառը տղամարդն է լինում, կինը՝ ամուսնու համա-ձայնությամբ՝ կենակցում էր մեկ այլ տղամարդու հետ, ըստ որում հղիանալուց հետո՝ նա փառում էր իր կապերն այդ տղամարդու հետ։ Այս ձևով հասարակությունը հետապնդում էր իրականացնել ամուսնության բուն նպատակը։ Սակայն այս վերջին եղանակը հակասում էր ֆեոդալական հասարակության ըմբռնողությանը, ուստի եկեղեցին հատուկ որոշմամբ թույլ է տալիս լուծելու ան-պտուղ ամուսնությունը։ Ըստ եկեղեցական կանոնի՝ եթե բաժանու-մը կատարվում է կնոջ ամլության պատճառով, կինը վերցնում է իր հետ բերած օժիտը և ամուսնուց նյութական որոշ հատուցում ստանում՝ «վասն անարգանացն»։ Իսկ եթե մի այլ կին համար-ձակի այդպիսի տղամարդու հետ ամուսնանալ բաժանումից դեռ մի տարի շանցած, ապա նա տուպանվում է, եթե ազատների դա-սին է պատկանում, իսկ եթե շինական է, ուղարկվում է ուրկանոց պարտադիր աշխատանքի։<sup>2</sup>

<sup>1</sup> Ա. Ղևոչյան—Հայոց հին իրավունքը, 1913 թ., էջ 83։

<sup>2</sup> Ա. Ղևոչյան—Կանոնագիրը Հայոց, «Կանոնք Շահապիվանի ժողո-վոյն», 1913 թ., էջ 83։

Ինչպես ցույց է տալիս նույն ժողովի Դ. կանոնը, օրենքը միատեսակ պատիժ է սահմանում կնոջ և տղամարդու համար, եթե դրանցից որևէ մեկն իր ամուսնական կյանքում անհավատարիմ է եղել: Կնոջ հանդեպ տղամարդուն ոչ մի առավելություն չի տրվում: Եկեղեցին բռնագրավում էր մեղավորի գույքը, իսկ իրեն ապաշխարության ենթարկում: Օրենքը միատեսակ մոտեցում է ունեցել դեպի ամուսինները նաև ընտանեկան կյանքում ծագած այլ վեճեցրի դեպքում:

Թերած օրինակները ցուց են տալիս, որ վաղ միջնադարում իրենց ամուսնական և ընտանեկան կյանքում հայ կինն ու տղամարդը օգտվել են համասար իրավունքներով:

Շահապիվանի Դ կանոնի համեմատ՝ օրենքը խիստ է վարվում: Հատկապես այն տղամարդու նկատմամբ, որ թողնում է իր կնոջը, եթե սա մայր է դարձել: Այդպիսի դեպքերում օրենքը պահանջում է բռնագրավել ամուսնու ամբողջ շարժական և անշարժ գույքը, որի կեսը նա հատկացնում է մորն ու երեխաններին, իսկ մյուս կեսը գործադրում է հասարակության օգտին:

Միջնադարյան հայ հասարակության մեջ հզի կինը և հատկապես մայրը իսկապես մեծ հարգանք են վայելել: Այդ ցուց են տալիս «Կանոնագրքի» մեջ առկա մի շարք կանոններ: Այսպես, օրինակ, Սահակ Պարթևի Իջ կանոնն ասում է՝ «Եթե մեկը համարձակվի պղծել կնոջը, որը մայր է, նա դատապարտվում է տաս տարի ապաշխարանքի»:<sup>1</sup>

Միջին դարերի երկրորդ կեսին գրված մի այլ «Կանոնագիրք» արդ մասին խոսում է շատ ավելի պարզ և որոշակի: Այդ «Կանոնագրքի» մեջ առված է՝ եթե կինը որևէ մեղքի համար ենթարկվում է պատժի, ապա այդ պատիժը վերացվում է նրա հզիության, ծննդաբերության և մանկանը կրծքով կերակրելու ժամանակ. կինը բոլորովին ազատվում է պատժից, եթե ծննդաբերությունը կամ հետծննդյան շրջանը ծանր են ընթանում:<sup>2</sup> Հիշտ է, այդ կանոնները սահմանվել էին եկեղեցական ժողովում կամ եկեղեցու ներկայացուցիչների կողմից, սակայն դրանք ո՛չ թե եկեղեցու մարդասիրական զգացմունքի արտահայտության արդյունք էին հզի կնոջ կամ մոր հանդեպ, այլ գալիս էին ժողովրդի հնագույն տրադիցիաներից և այն հասկացողություններից, որ ժողովրդը շատ

<sup>1</sup> «Կանոնք» ս. Սահակայ Հայոց Հայրապետից, Կանոնագիրքը Հայոց,  
1913 թ.:

<sup>2</sup> Գետական Մատենադարան, ձեռաշդիր № 652:

դարեր առաջ մշակել էր ընդհանրապես հղության և հղի կնոց մասին: Իր այդ հասկացողությունները ժողովուրդն արտացոլել էնակ «Սասնա Շոեր» ժողովրդական-դյուցազնական վեպի հետևյալ հատվածում:

Խալիֆը հրամայում է գլխատել մահապատժի դատապարտված հղի Շովինարին: Խալիֆին հիշեցնում են, որ օրենքն արգելում է հղի կնոջը պատժի ենթարկել: Խալիֆն ստիպված է լինում հետաձգել մահապատժիք: Շովինարի ծննդարերությունից հետո՝ երբ խալիֆը կրկնում է իր հրամանը, նրան հիշեցնում են, որ ըստ ժողովրդի հասկացողության՝ արգելվում է պատժել կրծքով կերակրող մորը: Մահապատժիք նորից հետաձգվում է տասը տարով:<sup>1</sup>

Միջնադարյան հայ եկեղեցին՝ իր հսկողության տակ առնելով ամունության հետ կապված հարցերը, միմնույն ժամանակ սահմանել էր որոշ հիգիենիկ և պրոֆիլակտիկ միջոցառումներ ամունական և սեռական կյանքի համար և ձգտել իր իրավասությունը տարածել նաև երկրի ծննդաօգնության ամբողջ գործի վրա:

Եկեղեցու այդ միջոցառումները որոշ շրջաններում և որոշ դեպքերում դրական և ուցինալ բնույթ են կրել մանավանդ այն ժամանակ, երբ գրանք հիմնված են եղել ժամանակի գիտության նվաճումների վրա: Սակայն, մյուս կողմից, նրանք խիստ ունակցիոն բնույթ են կրել և բացասական ազդեցություն ունեցել մանկաբարձական գիտելիքների զարգացման ընթացքի վրա: Եկեղեցական կանոնների դրական միջոցառումների թվին են պատկանում հետևյալները: — ամունությունն օրինավոր չի համարվում, եթե չկա ամուսնացողների փոխադարձ համաձայնությունը, եթե նրանք մինչ ամուսնությունն իրար չեն տեսել և եթե ամունությունը կատարվել է ծնողների ճնշման տակ և այն: Այդպիսի ամուսնական ակտերից առաջանում են բազմաթիվ մարմնական և հոգեկան հիվանդություններ ու վնասներ:<sup>2</sup> Արգելված էր նաև ամուսնություն մոտ ազգականների հետ մինչև չորրորդ սերունդը և, վերջապես, ամուսնությունը փոքրահասակների մեջ (աղջիկը պետք է լիներ 13 տարեկան, իսկ տղան 15 տարեկանից ոչ պակաս): Սրանք այն միջոցառումներն էին, որոնցով միջնադարյան օրենսդրությունն աշ-

<sup>1</sup> «Սասնա Շոեր», հատ. I, էջ 838 և այլուր:

<sup>2</sup> Կանոնագիրք Հայոց, Կանոնք և Սահակայ Հայոց հայրապետիք:

խատում էր վերացնել հին ժողովուրդների ամուսնական կյանքում գոյություն ունեցող բացասական սովորույթները:

Ամուսնությունն իր բոն նպատակին ծառալեցնելու համար միշնադարյան օրենսդրությունն արգելում էր գործադրել հակառեղմանավորման միշոցներ և արհեստական վիճում կատարելը: Այս օրենքի դրական իմաստը եկեղեցին չեղոքացրեց նրանով, որ կրոնական բնույթ տվեց դրան և դարձրեց քարացած մի դոգմա: Հակարեղմանավորման միշոցներ գործադրելն ու վիճում կատարելը եկեղեցին մարդասպանության հավասար ոճքագործություն համարեց, հաշվի շառնելով անդամ այն դեպքերը, երբ հղությունը վտանգ է սպառնացել կնոջ առողջությանն ու կյանքին: Եկեղեցու այդ կանոնական արգելքը Դավիթ վարդապետ Ալավկա որդու «Կանոնագրքի» մեջ հետևյալ ձևակերպումն է ստացել. «Ապա թէ կենդանի իցէ մանուկն, մի ոք յանդկնեսցէ սպանանել զմանուկն յաղագս կենաց մօրն, թող մայրն մեռանիցի և մի մանուկն»:<sup>1</sup>

Այսպիսով, եկեղեցին՝ արհամարհելով քժշկական ցուցմունքները և ելնելով կրոնական գործայից, սահմանում է մի շարք մանկաբարձական օպերացիաների համար իր սեփական ցուցմունքները: Սրանով եկեղեցին խախտում էր կնոջ կենսական իրավունքները և բազմաթիվ դեպքերում զոհ էր բերում նրան կրոնական դոգմատիկային:

Եկեղեցու այդպիսի մոտեցումը մանկաբարձական որոշ միշամտությունների նկատմամբ, մյուս կողմից, կաշկանդում է հասարակության կենդանի ու ստեղծագործ մանկաբարձական միտքը և բացասարար ազդում մանկաբարձական գիտելիքների զարգացման վրա:

10-րդ դարի վերջին տասնամյակներից սկսած՝ Հայաստանում տեղի են ունենում խոշոր սոցիալ-տնտեսական փոփոխություններ: Այս շրջանում միշազգային առևտություններն անցնում են Հայաստանի վրայով: Բազմաթիվ հայկական քաղաքներում աճում և ծագկում են առևտուրն ու արհեստուրը: Երկրում առաջ են գալիս նոր դասակարգային խմբավորումներ, սրվում դասակարգային հակասությունները, ուժեղանում հասարակական-կրոնական բնույթ ունեցող շարժումները, որոնք ուղղվում են ֆեոդալական եկեղեցու և իշխող դասակարգի դեմ: Դրանց արդյունքն է նաև մոտ հարյուր տարի տևող թոնդրակեցիների շարժումը, որոնց ծրագրի մեջ էր

<sup>1</sup> Մատենագարան, ձեռագիր № 487:

մտնում նաև կնոջ և տղամարդու հավասարեցումը, պսակի, մկրո-  
տության և այլ կրոնական խորհուրդների ու ծեսերի վերացումը:<sup>1</sup>

Ճիշտ է, թոնդրակեցիների շարժումը շախչախվեց, բայց նրա  
ազդեցությունը ժողովրդի մտածելակերպի վրա բավականաշափ  
և երկարատև է եղել: Ըստ Ն. Մարի XII դարում «Անի քաղաքի  
կյանքը կանանց սոցիալապես հավասարեցրել էր տղամարդկանց  
հետ: Անեցի կանայք անարգել վայելում էին տղամարդկանց քա-  
ղաքացիական իրավունքները»:<sup>2</sup>

Ն. Մարի տվյալները հայ կնոջ իրավական դրության մասին  
կողմնակի կերպով հաստատվում են XII դ. Հեղինակ՝ Միհթար  
Գոշի «Դատաստանագրքի» մեջ եղած ամուսնությանը վերաբերող  
Հոդվածներով, որոնցից երկում է, որ ամուսնական կյանքում եղած  
վեճերի դեպքում՝ ամուսիններն օգտվում են հավասար իրավուն-  
քով: Այսպես, օրինակ, եթե ամուսիններից որևէ մեկը տառապում  
է անբուժելի հիվանդությամբ, երկու կողմին էլ հավասար չափով  
իրավունք է վերապահվում ապահարզան պահանջելու, կամ՝ միե-  
նույն մեղքի համար նշանակված տուգանքը միատեսակ է թի'  
կնոջ և թի' ամուսնու համար:

Հակառակ Շահապիվանի ժողովի որոշման այն կետին, որը  
վերաբերում է անպտուղ ամուսնությանը, «Դատաստանագրքը»  
արգելում է լուծել այդպիսի ամուսնությունը: Հավանական է, որ  
այս հարցում «Դատաստանագրքի» հեղինակը նույն մոտեցումն  
ունի, ինչ որ Դավիթ Ալավերդի որդին, այսինքն՝ որ անպտուղ կա-  
նայք և տղամարդիկ պետք է պարտադիր կերպով բուժվեն քիշեկ-  
ների մոտ:

Եթե նկատի ունենանք, որ միշնադարյան գիտության պայ-  
մաններում անհնարին էր հաստատել տղամարդու անպտուղ լինե-  
լը, որի հետևանքով անպտուղ ամուսնության պատճառը համարյա  
միշտ կինն էր համարվում, ապա դժվար չէ եղանակացնել, որ «Դա-  
տաստանագրքի» այս հոդվածը պաշտպանում էր, գլխավորապես,  
կնոջ իրավունքներն ու շահերը:

Ահա այս պայմաններում է, որ մանկաբարձությունը մյուս  
գիտությունների հետ միասին՝ ազատվում է վանականների ան-  
սահմանափակ հսկողությունից ու ազդեցությունից և աստիճանա-

<sup>1</sup> Մ. Արեգական-ՀՀայոց հին գրականության պատմություն, Երևան 1948 թ., էջ 12:

<sup>2</sup> Հ. Յ. Մարը. «Ան» 1939 թ. стр. 75.

<sup>3</sup> Պետ. Մատենագրան-Զեռ. № 487:

բար անցնում է աշխարհական բժիշկների ձեռքը։ Դրա հետևանքով էլ լայն հնարավորություն է ստեղծվում ուսումնասիրելու կնոջը թե՛ հղության և ծննդաբերության ընթացքում և թե՛ դիահերձման միջոցով։

Այս շրջանից մեզ հասել են հայ բժիշկների մի շարք ինքնուրույն աշխատություններ, որոնք նվիրված են մանկաբարձական և պինեկոլոգիական որոշ խնդիրների ուսումնասիրությանը։ Դրանցից մեկի մեջ՝ ովասն կանանց ցաւոյ, որ ի տղայիկելութիւն պատահիա, անհայտ հեղինակն առաջարկում է ընդհատել հղությունը, եթե այն վտանգ է սպառնում կնոշ կյանքին։ Իր այդ առաջարկությամբ հեղինակը ժխտում է եկեղեցու իրավասությունը բժշկական խընդիրներ լուծելու ասպարհուում և հարց է հարուցում բժշկական ցուցմունքներ սահմանելու անհրաժեշտության մասին։<sup>1</sup>

Այստեղ պետք է նշենք այն հանդամանքը, որ՝ չնայած եկեղեցու ոեակցիոն ազգեցությանը բժշկական մտքի վրա, Հայաստանում կլասիկ հումական տրամադրության ավելի լավ էին պահպանվել, քան արևելյան մյուս երկրներում և Եվրոպայում։ Այսպես, օրինակ, Գավիթ Ալավկա որդու «Հանոնագրքից» երևում է, որ XI դարում մանկան միջաձիգ դրության դեպքում՝ Հայաստանում պարտադիր էր համարվում պտղաշարժման օպերացիա կատարելը։ Այդ օպերացիան կատարվում էր հին Հումաստանում՝ դեռ Հիպոկրատի ժամանակ, քայլ միջին դարերի սկզբից մոռացության է տրվում և միայն 13—14-րդ դ. դ. նվրոպական գրականության մեջ այդ մասին կան որոշ ակնարկներ։<sup>2</sup> Իբրև մանկաբարձական հիմնական օպերացիաներից մեկը՝ պտղաշրջումը նվրոպայում սկսում են կատարել միայն 16-րդ դ. սկզբներից։

Գավիթ Ալավկա որդու այդ աշխատությունից և Գրիգոր Մագիստրոսի «Թղթերից» երևում է, որ Հայաստանում 11—12-րդ դ. դ. դործնական մանկաբարձությամբ զբաղվում էին ոչ միայն կանայք, այլև տղամարդ բժիշկները։ Դա հետևանք էր այն հասարակական դիրքին, որ գրավում էր հայ կինը այն ժամանակվա հասարակության մեջ։

Անիի, Դվինի և Համբերդի պեղումներից երևան բերված կյուրիտները, ինչպես և 12—15-րդ դ. դ. բժշկական գրականության մեջ թված բազմաթիվ հակաբեղմնավորման միջոցները վկայում

<sup>1</sup> Պետ., Մատենագիրան—Զեռ. № 8382.

<sup>2</sup> Г. Гезер—Основы истории медицины, Казань, 1890, էջ 143.

են, որ եկեղեցու ազդեցությունը մանկաբարձության վրա իսպառ շնորհացված է եղել։ Մյուս կողմից, կնոջ սեռական օրգանների անատոմիայի և ֆիզիոլոգիայի ուսումնասիրությունների համար ստեղծված պայմանները, և մանկաբարձական արտաքին ու ներքին զննման ձևերի գործադրումներն ստեղծում էին բոլոր նախադրյալները մանկաբարձական գիտելիքների հետագա զարգացման համար։ Բայց և այնպես, թե՛ այդ գիտելիքների և թե՛ ընդհանրապես գիտությունների նորմալ զարգացման ընթացքը Հայաստանում արհեստականորեն ընդհանրվում է, երբ հայ ժողովուրդը կորցնում է իր անկախությունը։

Հինգ և կես դար հետո՝ միայն սոցիալիստական հասարակության մեջ, երբ հայ կինն ունի լիակատար իրավունքներ, մանկաբարձական գիտությունը Հայաստանում այնպիսի մի վերելք է ունենում, որը հնարավոր չէր պատմական մի այլ շրջանում կամ մի այլ իրավակարգում։

#### Г. Г. АРУΤЮНЯН

### ПРАВОВОЕ ПОЛОЖЕНИЕ ЖЕНЩИНЫ И МАТЕРИ В ДРЕВНЕЙ И СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ В СВЯЗИ С РАЗВИТИЕМ АКУШЕРСКИХ ЗНАНИЙ

Развитие акушерских знаний у армян, как и у других народов, было тесно связано с правовым положением женщины и матери, что в свою очередь зависело от социально-экономической структуры общества данного исторического периода.

Ряд памятников материальной культуры, хранящихся в Ереванском Историческом музее (например изображение на камне матери с ребенком, относящееся к неолиту, такое же изображение, выполненное на золоте, относящееся к 1 в. до н. э., и другие памятники, обнаруженные при раскопках в разных районах Армении), а также анализ данных, отраженных в армянском народном эпосе и обычном праве армян, дают нам возможность в некоторой степени охарактеризовать правовое положение армянки в древнейшем обществе. Изучение этих памятников материальной и духовной культуры Армении показывает, что в тот период брачная связь женщины с мужчиной

была случайной и кратковременной, единственным достоверным родителем детей являлась мать и в семье господствовало материнское право—женщина занимала высокое общественное положение. Эти данные находят подтверждение в словах Ф. Энгельса, который указывал, что «первоначальное положение матерей, как единственных родителей своих детей, обеспечивало им, а вместе с тем и женщине, вообще такое высокое общественное положение, какого она потом никогда уже не занимала». (Ф. Энгельс, «К истории первобытной семьи»). Об этой тесной связи между матерью и ребенком в первобытном обществе указывают также памятники с изображением матери и ребенка и данные раскопок ряда древних могильников, произведенных Е. Лалаяном и К. Кафадаряном на территории Армении, в которых умершая мать была похоронена вместе с живым ребенком. Об этом же говорят и данные армянского эпоса и обычного права, запрещающего налагать наказание на беременную женщину и кормящую мать.

Акушерские знания в эпоху первобытного общества, несомненно, носили чисто эмпирический характер.

В классовом обществе женщина постепенно теряет роль и значение, которые она занимала в родовом обществе.

В феодальном обществе, на базе новых социально-экономических отношений, устанавливаются новые правовые нормы и отношения не только между различными классовыми группами общества, но и в семье. Армянская феодальная церковь, распространив свое влияние на все стороны духовной жизни народа и взяв в свое ведение институт брака, стремится создать новые отношения в семье. Стремясь превратить институт брака в церковный акт, армянские церковные соборы (например, Шаапиванский собор 447 г.), при участии светских представителей власти, выносят ряд решений и постановлений, регулирующих вопросы брака и правовых отношений между мужем и женой. Анализ этих решений и постановлений показывает, что под давлением светских тенденций в основу их было принятоочно бытовавшее в народе древнеармянское обычное право. Ввиду этого церковный брак у армян носит достаточно выраженные черты гражданского брака (А. Глтчян). В этих постановлениях был признан принцип ра-

сторжимости брака, а при разводе и других семейных спорах жена и муж пользовались равными правами; также был запрещен брак между малолетними и установлен минимальный возраст для брачующихся: 13 лет для женщины и 15 лет для мужчины. Наконец, был запрещен брак по принуждению. Сила народных традиций и обычаев сказалась и в том, что когда вопрос касался матери и ребенка или беременной женщины, их права и интересы защищались действующим законом. Так, например, один из канонов Шаапиванского собора (447 г.) требует конфискации всего движимого и недвижимого имущества мужа, если он покидает жену с ребенком; половина конфискованного имущества передавалась матери и ребенку, а другая — в общественное пользование.

Взяв в свое ведение институт брака, армянская церковь одновременно подчинила своему контролю и все родовспомогательное дело. Это обстоятельство имело резко отрицательное влияние на состояние и развитие акушерских знаний в стране, так как для определенных вмешательств при родах и основных акушерских операциях церковь установила свои собственные показания. Эти показания, основанные на религиозной догматике и идущие вразрез с медицинскими показаниями, душили всякую живую научную мысль и задерживали ее развитие. Вследствие такого вмешательства церкви нередко жизнь и здоровье женщины приносились в жертву религиозной догме.

В конце X и в начале XI вв. в Армении происходят крупные социально-экономические сдвиги. В это время транзитные пути мировой торговли стали проходить через Армению. Здесь происходит рост и расцвет городов, в которых сосредоточивается крупная торговля и ремесленная промышленность. В связи с этим в стране возникают новые классовые группировки, обостряются классовые противоречия. Молодая буржуазия предъявляет к науке новые требования. Влияние церкви на науку, в частности на медицину, постепенно ослабевает и уступает свое доминирующее положение светским ученым и врачам. В изменившейся бытовой обстановке, в новых условиях, женщина делается более доступной для исследования и изучения.

По данным акад. Н. Я. Марра, женщина в Ани в XII —

XIII вв. пользовалась всеми общественными правами наравне с мужчиной (Н. Я. Марр, «Ани», 1939 г., стр. 75). Эти данные Н. Я. Марра косвенным образом находят свое подтверждение в тех статьях «Судебника» Мхитара Гоша (XII в.), которые касаются имущественных и правовых отношений жены и мужа при разводе, вызванных теми или иными причинами. Почти во всех случаях развода жена пользуется теми же правами, что и муж.

В XII—XV вв. появляется целый ряд работ, которые специально посвящены вопросам акушерства и гинекологии. Это обстоятельство говорит о том большом интересе, который был проявлен к изучению этих дисциплин. В свете охраны жизни и здоровья женщины пересматриваются показания к вмешательству при тяжелых осложнениях беременности и при производстве акушерских операций. Так, например, вопреки требованиям церкви, автор работы «О заболеваниях женщин, которые возникают от беременности» требует искусственного прерывания беременности в тех тяжелых случаях почечных заболеваний беременной женщины, когда болезнь угрожает ей смертью (рукопись Матенадарана № 8283).

Начиная с XII в. данные медицинской литературы показывают, что медицина, в частности акушерство, освободившись из-под опеки церкви, стала на путь прогресса и достигла большой высоты в XII—XV вв. С потерей государственности и политической независимости (в конце XIV в.) в Армении в области акушерских знаний наступает период длительного, пятивекового застоя. Только с установлением советской власти в Армении, при социалистическом правопорядке, когда женщина является равноправным и полноправным членом общества, акушерские знания достигли расцвета, невозможного при другом общественном строе.